Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

962.1
.24

[illegible]
Е. В. Тер-[illegible]
[illegible] ул. [illegible]

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ „ԴԷՊԻ ԼՈՅՍ".

№ 1.

*ԱԶԻԱՆԻ.*

# ԽԱԲՒԱԾ ՅՈՅՍԵՐ.

(կոմեդիա 2 արար.)

*Վրացերէնից փոխադրեց՝*
*ՄԱՐՏՕ.*

1906.

## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ.

Ընկերներ!

Երեւան գալով այսպիսի մէկ պատմական մոմենտում, երբ խորտակւում և քար ու քանդ է լինում ամեն ինչ հինը, տեղի տալով նորին, մեր նպատակն է՝ ծառայել բանւորական ազատագրական շարժմանը, և պարբերական հրատարակութիւններովը տարածել հայ խաւար մասսաներում գիտութեան լուսաւորութիւնը։

Ժամանակ է վերջապէս մի կողմ շպրտելու մեր դարաւոր ստրկութիւնը, արդէն վաղուց ժամանակ է ասելու արար աշխարհին, որ մենք էլ մարդ ենք և այլ ևս չենք թոյլ տայ մեր պարազիտներին այսուհետև էլ մեզ կեղեքելու, մեր մարդկային արժանաւորութիւնները ոտքի տակ տալու։ Ժամանակ է արդէն շարժւելու մեր խաւար մթնոլորտից և դիմելու «Դէպի լոյս»-ը։

Գնալ և ուղղեկցել մեր ընկերներին դէպի լոյս-ի ազատութիւնը, ահա սա է մեր լօզունգը, թող դա լինի և ձերը։

«ԴԷՊԻ ԼՈՅՍ»։

899.962.1
Ե-24 ար
NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ „ԴԷՊԻ ԼՈՅՍ“.

800
49-ԱԶ
№ 9064
Յ.Ո.
100
93

ԱՑԻԱՆԻ.

# ԽԱԲՒԱԾ ՅՈՅՍԵՐ

կոմեդիա 2 արար.։

ТИФЛИССКАГО СОБРАНІЯ БИБЛИОТЕКА

Վրացերէնից փոխադրեց
ՄԱՐՏՕ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ռոստով Դոնի վրայ. Տպարան «Դոնսկայա Ռեչ»

Ростовъ на Дону. Типографія „Донская Рѣчь“

1906

- 01. 2013

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

| | | |
|---|---|---|
| Ստեփան Իվանիչ Ջարալով . . | 60 տ.—պ. | Գրիգորեան. |
| Նինօ. սորա կինը . . . . . . . | 48 տ.—տ. | Նոնիկեան. |
| Վանօ. բժիշկ . . . . . } սոցա | 26 տ.—պ. | Վարդանեան. |
| Սօնա. գիմնազիաւարտ } որդիքը | 18 տ.—օր. | Սայիֆեան. |
| Կէկէլ. սրանց ծանօթ այրի կին . | 50 տ.—տ. | Արաքսեան. |
| Գաքօ. սորա մինուճարը իւրիստ . | 24 տ.—պ. | Մարկոսեան. |
| Գիգօ. Ջարալովենց բարեկամը . . | 49 տ.—պ. | Պօղոսեան. |
| Շինական. խեղճ գիւղացի . . . . | 45 տ.—պ. | Ղուշչեան. |

Անցքը կատարւում է Թիֆլիզում։

Առաջին անգամ խաղացւեց Թիֆլիզում, Մայիսի 29-ին 1905 թ. Հաւլաբարի Արաքսեանի թատրոնում, վերոյիշեալ անձանց մասնակցութեամբը։

## Ա. ԱՐԱՐՈՒԱԾ.

Բէմը ներկայացնում է կիսաեւրոպական եւ կիսաասիական ճաշակով զարդարուած ճոխ հիւրասենեակ: Խորքում, աջ եւ ձախ դռներ, որոնցից առաջինը՝ տանում է դէպի ընդհանուր մուտքը. երկրորդը՝ Վանօյի սենեակը. իսկ երրորդը՝ Ստեփանի ննջարանը:

### ՏԵՍԻԼ 1.

**Ստեփան և Նինօ.**

(Վարագոյրը բարձրանալիս Ստեփանը նստած է սեղանի մօտ եւ հաշիւ է անում: Նինօն հայելիում կաւիք է ուղղում):

**Ստեփան.**

Գիմնազիոնի համար վուր պատրաստել տւի—իրեք տարւայ ծախսը. ութը տարի գիմնազիոնում էլած վուխտւայ ծախսը. իժում վից տարի էլ ունիվերսիտետի ծախսը, էն վուր ամէն ամիս իրեք-իրեք թուման կոլորում էի կոնվերտում ու Մոսկով ղրգում: Մէ խօսքով հիմի էլ...

**Նինօ.**

(Ընդմիջելով)։ Ա՜յ մարդ, էրնէկ գիդենամ, ինչի համայիս էտենց էրգար ու բարակ ծըծրեցնում...։ Վուրդիանց է վից տարի, քանի վուր գիփ մէտի 5 տարւայ կուրս է։

**Ստեփան.**

Տó ցանցար, տօ բէյղուշ, բաս մտամէդ գցիլիս վուր մէ տարի էլ «բունտի» համար կորցրից...։ Մէկ էլ էն չախը, ինձ պակաս դաղուլթարափ արեց, ա՛յ, չէ՞...

**Նինօ.**

Ի՞նչ անենք. էդ իրան էրէխութէնիցն էր։

Ստեփան.

Լա՛ւ «էրէխութին է», քիչ մնաց վուր գժվիլ էի: Ը՛... ը՛... ինչ էի ասում,.. մոէս ննջաւ... հա՛, հիմի էլ նրա նարադը, գրէրը, հագուստը, ամառնիրը գնալ-գալու համա ճամփի խարջը... ը՛... ը՛... էն մի խօսքով, էլ ի՛նչ գլուխդ ցաւեցնիմ. պրացենտն էլ վուր վրէն գնանք—կանի դրուստ էրկու հազար թուման էնէնց, վունց որ մէ գրօշ:

Նինօ.

Հալալ ըլի, մեռնիմ իս Վանօյիս պետալած ջանին. ա՛յ հիմի կուգայ—էրկու հազար էլ կտայ, ու քսան հազար էլ: Անգլիզէն ասում է «դաւլթվրէլ չ-իլվի-դաւրծի է վօ, դամնզարդնեն դաւրծի է վօ»: Կուգայ, մէ տիղ գործի կու կանգնի, պրաքտիկայ ձեռք կու գցի, մարդ կու ճնանչի ու...: Ա՛... ա՛խ Ստեփան ջան, էրնէկ դու էս անիրը քանդէիր ու էլի նուր մէկանց թազա շինէիր. էն չախը կի թամամ լաւ կուլէր:

Ստեփան.

Ասա տեհնիմ. ի՞նչ կարիք կայ քանդելու, ու նուր մէկանց թազա շինելու: Փառք Աստծօ, խօ տեհնում իս վուր գալիցնու-պիս, տիղս շայիմ կաղնած իմ:

Նինօ.

Գանա չիմ գիդի, արարմունքդ էլ է գալիցնու պիս...: Մէ աջ ու ձախ մտիկ արա, էս ի՞նչ գալիցնու լայեղ տուն է. հին ակոշկէք ցածր օճօրք ու ջարախանի դռնիր: Արա հիմի էլ էսթաուր դռնիրը վուրդի կուտեհնիս հա...: Գոխտուր վուրթիդ պիտի էսթաուր օթախում ապրի, ամենաքիչը ջէր իրեք օթախ իրան է հարկաւուր: Հիմի էլ խօ «պատատակի» մարթիք չինք քա...

Ստեփան,

Բաս չէ ու Գունդուկ-Կորսակովի ազգիցն իս:

Նինօ

Հուսում առած վուրթի վա՛ր ունինք, «հուսում առած էլ պիտի ապրինք: Ջեր մէ դու պովիր-լաքիա էլ բանէ:

Ստեփան.

Բա՛ս, բա՛ս, իս էլ գիդի էտունք իմ փիքր անում: Հ°ը, ուրիշ



վունչինչ հարկաւուր չի՞. բաս պովրի պամոշնիկը... ինչի՞ իս մոռանում: Վրացիար ասածա Նինօ, «Բաց ար էքնաս մամաշէնասա, չէնց նա՛ւ դախե մարմաշէբասօ»: Ի՞նչ պապետ էր լաքիապովիրով ժաժ գալիս, թո՛ւ-պապէս:

Նինօ.

Օչում էլ չինք ունեցի, համա միր վուրթին պիտի ունենայ. հազար էլ ասիս-չասիս, պիտի ունենայ: Բաս լա՛ւ. անտաշ գեղցու բջի պատրաստած կիրակուրնիրը պիտի ուտեցնիս:

Ստեփան.

Տէր ողորմած Աստուած, հիմի իս ի՞նչ անիմ, չի՞ք թողնի վուր մէ քիչ շունչ քաշիմ: Հազար մի պարտքով, վայ-վազլախով, վուրթի իմ մնձացրի, հուսում-կրթութին իմ տուի, ու հիմի կի համեցէք անելով, ինձ բաղդաւուր ապրելու ձիւը չպիտի սովրեցնի, «բլօմանժէքի» համը, բերնեմէս անպակաս չպիտի անի:

Նինօ.

Դրան էլ կուհասնիս Ստեփան ջան, կուհասնիս. էգքամ էլ անհամբեր մի ըլի: Բաս չիս իմացի, «ադգդամս դա խմլալօ»: Կուգայ ժամանակ վուր, մեր բախտին, մենք ինքնիրս էլ էրնէկ կուտանք:

Ստեփան.

Տա՛յ Աստուած, տա՛յ Աստուած, վուր իմ ամո՛ղ աչխատանքս ջուրը չտանի. փուճ չանցկենա:

Նինօ.

Փո՛ւճ, մա՛չ, մա՛չ, մեռնիմ իս Վանօյիս խելօք ջանին. նա ուրիշ սօրթի տղայ է. նա վուր կայ, դէդմամի ամիցն է ու մոխթարանքը: Բա՛, հիմի իմ արմնում թէ վունց կարացի էրկու տարի դիմնալ նրան չտեսնելովը: Անցած ու էս ամառը խօ չի էկի, քա՛:

Ստեփան.

Լա՛ւ, լա՛ւ, այ էսօր գուքայ ու դու էլ ուրախութէնից դդակդ օճորքին խփէ: Արա քիդ տեհնիմ վուր հիդ չմնաս ու լօտօն, լօտօի վրէն սարքիս: (Ծողովրդին): Թամամ պիտի կուտրացնի էլի, էս տնաքանդը:

Նինօ.

Երնէկ իս բարով-խերով արժանանամ Վանօիս տեսութէնին, թէ չէ լոտօ էլ կուսաքքիմ ու «վերտաչկէք» էլ։ Ո՞վ կանա դաչլա անի, քա՛։ Ապա մէ քիզ իմ հարցնում, բախտաւոր մեր չիմ բաս ի՞նչ իմ. սիրուն, պեաղած ու խելօք դոխտուր վուրթի ունիմ։ Իժում վուր աղջկաս էլ մարթու տանք է, էլ էն չախը իմացիր Ստեփան ջան, վուր մեր բախտին չունն էլ չի կանա հաչի։

Ստեփան.

Սօնի մարթու տալը, թող Վանօյի վզին ըլի։ Ինքը թող փսակւի իրեք հազար թումանոց ախչկայ վրայ ու իժում մէ իրեք հարիր թուման էլ քվոր վզիցը կախ տայ ու լաւ սիրուն ճամփու գցէ։

Նինօ.

Եփոր ախչկերանց տէրիրը կիմանան վուր Զարալովենց «դոխտուր» տղէն էկիլ է. էն չախը թամաշա արէք թէ մոցիքուլը, մոցիքուլի վրէն ինչքամ ին ղրգում։ Բա՛, ո՞վ ա իմանում չունչ քաշելու համա վուխտէլ չունենանք. մա՛չ։ (Նայում է հայելիում եւ կաւիքը ուղղում)։ Ի՞ֆ, իֆ, ինչ ջահել, խնամի ու տալը կուլիմ է, մէ օր ախչկաս մօդ վիզիտ կօնիմ, մէկ էլ օրը —տղիս։ (Սօնան մտնում է աջ դռնից):

## ՏԵՍԻԼ 2.

Ստեփան, Նինօ և Սօնա.

Նինօ.

Էսքամ ժուդ ուր իս վուրթի։

Սօնա.

Վանօյի սենեակն էի կահաւորում։ Բոլոր պատուհանները բաց արի, որ օդը մաքրուի. սեղանի գրքերը մաքրեցի, այնպէս որ երբ եղբայրս գայ, բոլորը մաքուր կտեսնի։

Ստեփան.

Ա՜յ, ղօչաղ, ղօչաղ. էտէնց ա՛յ Սօնա ջան։ Հիմի դուն պիտի ախպօրդ աչքունքին մաչի անիս, վուր էգէքայ մէ իրեք հարիր թումնով լաւ փեսայ ճարի միզ համա։



Սօնա.

Եթէ երեք հարիւր թուման ունի, աւելի լաւ կանէ, որ ինձ համալսարան ուղարկի, ուսումս աւարտելու համար։ Ես ամուսնութեան մասին դեռ չեմ մտածում։

Ստեփան.

Տօ՛ տուտուց, մաչ էնքամ էլ չիս իմանում, վուր քիզ մէնակ Ռուսէթ չիմ ղրգի ու միր անումն էլ խայտառակ չիմ անի...։ Վա՛, հէր օխնած, դէն ածելու փուղիր խօմ չունիմ։

Սօնա.

(Վիրաւորուած)։ Ձեր անունը ես պէտք է խայտառակեմ։ (Ցխուր նստում է դաշնամուրի մօտ):

Ստեփան.

Բաս Ռուսէթում «կուրսիր աւարտիլը» ի՞նչ աղջկայ բան է։ Թէ ինձ կու հարցնիս գիմնազիոն էլ հառամ է ձիզ համա։ Ախչիկը պիտի վուրթիք մինձացնի. լաւ համով-հոտով կերակուրնիրու էփիլը սովրի, ու տիզն ընգած տիզն էլ, լուացք ու ութօ անի, թէ չէ...

Նինօ.

Ի՞նչ վուր սովրեցիր, Սօնա ջան, էդ էլ ա հերիք։ Աստուծով կարաս էդքամով էլ լաւ փեսայ ճարիս։ Գիմնազիոնը աւարտիլ իս ու փորտուպիան ածիլ էլ սովրիլ։ Քիզ մասխարայ դըող չիս ունենայ զենացեայ, մի՛ վախի...

Սօնա.

Մա՛յրիկ, դուք կարծում էք թէ ես մտածում եմ՝ երբ և ում հետ պէտք է ամուսնանամ. ո՛չ, երբէք...։ Հաւատացէք, որ իմ մտածմունքներիս առարկան միմիայն բարձրագոյն կրթութիւն ստանալն է և ուրիչ ոչինչ։ Վաղուց է արդէն ինչ որ ինձ համար ամուսին եմ ընտրել, ուստի խնդրում եմ չնեղացնէք ինձ։

Նինօ.

Ջէ՛ վուրթի, չէ։ Ամեղ տիղը Գաբօյի ումիդով մի՛ մնայ. ուրիչ փեսացուներից մի՛ փախչի. (խորհրդաւոր). բախտդ մի՛ կորցնի։ Սուդենտի վուխտը վուր քիզ խօսք է տւի, հիմի էլ դիդումիս թէ իրէն խօսքին տէր կուլի...։ Գիդումիս վուր,

դայ թու չէ, հէնց քիղ վրայ պիտի պակսի... ղիմխ, ղիմխ...։ Մէ նրա մօր անդձումն էլ փոփայ էտոնք է...։ Կնիկը իրէն Գաբօի համա իրեք հազար թումնանոց ախչիկ է պտռում, ու դանա չիմ գիդի վուր քիղ դարուդարդակ իրան հարս չի չինի...։ Դուն ջէր կէկէլին լաւ չիս ճնանչում, չէ, Սօնա ջան...։

Ստեփան.

Իս ու իմ Սատուձը վուր դէդէդ սուտ չէ ասում։ Դիփունքը պիտի իրենց դլխի թադարիքը տեհնին։ Այ, հիմի իմ Վանօս էլ վուր ամիուղ ախչիկ տուն գցի, է, Աստձու մի անումը վկայ, վուր տուն չիմ թողնի, էրէսին մտիկ չիմ անի։

Սօնա.

Պապա, պապա, ձեր խօսքերից երևում է, որ չքաւոր օրիորդները պէտք է կուսանոց մտնեն։

Ստեփան.

Ինչի վուրթի, չունևուր աղջկան պիտի հարուստ մարդ ուզի. ու հարուստ աղջկան—չունևուր մարդ։ Թէ չէ, վունց որ ալխանա—էնէնց էլ չալխանայ։ Ի՞նչ կդուս գայ էտուց. ինչով պիտի ապրին...

Սօնա.

Սիրոյ բարեկամութեամբը, և քաղցր պատուասիրութեամբը։
Съ милымъ рай и въ шалашѣ.

Ստեփան.

Աբա մէ քաղցածութէնից աչքներդ էրվելիս ըլի. ցրտից, ակրեքդ-ակրեքին խփելիս. պարտքան տէրերը բողկից խեղդելիս ու իժում տեսնինք թէ վուրդղանցի սէր ու բարեկամութին կարաս մտ բերի...։ Էհ, վուրթի, վուրթի, դու ինչ գիդիս, դու ջէր էլի էրէխայի-էրէխայ։ Սօնա ջան, դուն պիտի գիդենաս վուր էս «դժար» աշխրքումը էլ դուս չի գնում քու ասած սէրը ու սիրութինը։ Շատ ու շատ հարուստ մարթիք կան, վուր ինդաուրի տոլ խիլք էլ չունին գլխներումը. համա դիփունքը կի նրա վուտի տակի զուլերին. ինչ է—էգէբա մէ բան հալեցնին... ծ... ծխ... փուղը էնէնց զօրութին ունի, վուր ուսումնական մարթուն, իրան սարսաղութէնի համա գլուխ է խոնարհեցնիլ տալիս, ու «մինձ» մարթուն էլ—խոնարհութէնի։ Աբա մէ աջ ու



ձախ մտիկ արա ու տես թէ մեր քաղքումն էլ էտէնց բանիր չի ըլում։

Նինօ.

Ինչի՞ր ես ասում քա, մենակ թէ էտի. փուղը ամէն տեղ էլ վրայ էրկու Աստուձ է։ Օղումց դուն մէ հարուստ մարթի բառտ գաս Սօնա ջան, թէ չէ սէրը ինչիդ է պէտք։ Լաւ ապրուստին ինչ սէր ու բարեկամութին կու հասնի քա։ Ի՞նչ քէֆդ տայ կէր, խմիր, հագիր... ուր որ ուզում ես գնա, արի. ում որ քէֆդ տայ կանչիր քիղ մօտ..

Սօնա.

(*Լացակում.*) Ужъ надоѣли просто! Պապա, պապա խընդրում եմ ինձ այլ ևս չյիշեցնէք այդ անիծեալ փողը։ (*Երգում և նւագում է «վարշավեանկա»*).

Շաչում են ոսխերիմ հողմերն անընդհատ,
Սև, մութ ուժերը կատաղի ճնշում,
Նորանց դէմ վարում ենք օրհասական մարտ,
Անյայտ մի վիճակ է մեզ դեռ սպասում.
Բայց մենք կպարզենք, անվախ ու հպարտ
Դրօշի . . . . . . . . . . . . . . . . . . .

Ստեփան.

Լաւ, լաւ, ականջներս մի խլեցնի։

Սօնա.

Դուք էլ փող ու փող ասելով, սիրտս մի պղտորէք։ (*Շարունակում է։*)

. . . . դրօշակը—բանւորի ազատ,
Դրօշակը մեծ գործի ժողովրդական
Ցանուն նոր կեանքի—սուրբ ազատութեան։

Դէպի մարտ արեան, |
Արդար, սրբազան, | կրկնել։
Քայլեցէք յառաջ, |
Բանւորներ քաջ։ |

Ստեփան.

Даволно, даволно вамъ гавару.

Սօնա.

(*Վեր է կենում.*) Պապա, համբուրելու համար հօ չէք բերել այստեղ. պէտք է նւագել թէ ոչ։

Ստեփան.

Ա՛յ եփոր իս տանը չիմ ըլի, էնքամ ծնգծնգեցրու վուր քու զանգէն էլ գնայ։ Ղօնաղների վուխտը թխթխկեցնիս, ինչ կօսիմ, թէ չէ... մ... մխ։

Սօնա.

Ես չեմ կարող, որպէս պատւէր ածել։ Հասկանում էք թէ ո՛չ։ (Բարկացած դուրս է գնում):

## ՏԵՍԻԼ 3.

Նինօ և Ստեփան.

Նինօ.

Ա՛յ մարդ, չիս էլ ուրախանում, վուր էտէնց լուսաւորւած ախչիկ ունիս։

Ստեփան.

Է՛հ. էնքամ էլ ուրախալի չէ իս ու իմ Աստուծը։ Ասա մէ տեհնիմ ինչ է ինքը. ինչ մէ բանի պէտքական է. ինչ պիտի դուս գայ վիրջը, ինչ. վուրթիք մնձացնի, ա՛յ խուզ կենայ ինձ դրա մնձացրած վուրթիքը հա։ Ի՞նչով պիտի աշխըքումը խառնուի, (դաշնամուրը ցոյց տալով). Նրանո՞վ—ա՛յ Աստուծ անիծի դրա մօգօնողին հա, դա ինչ մօգօնելու բան է... (Ձեռքով խփում է)։ Սա իօ «մեռած կապիտալ է, մեռած»..։ Ափսոս, հազար ափսոս էն քարսուն թումանս, վուր էսթաւր դարդակ բանի համա իմ կորցրի։ Էդ էլ իօ քու մեզաւորութին է...։ Ը՛... ը՛!!... դու որ ուզենաս, մարդուն սարերովը կուդցիս։

Նինօ.

Քա՛ «վին րա իցիս, խուրմա րա խիլիս». տրա Ստեփան դուն ինչ լուսաւորութին էս տեսէ, վուր էտանք էլ իմանաս...

Ստեփան.

«Թող էնթաուր կովը քացի տայ, վուր կուժնով ըլի կթւած». ասում է անդաղէն։ Մէ ասա տէհնիմ, բաս դուն վուր-դիս կուրալ ատարտի...

Նինօ.

Դրուստ է, վուչ մէ տեղ չիմ աւարտէ, համա կարամ ասի վուր՝ էս ժամանակիս բանիրը, քիզմէն լաւ իմ իմանում։ Ինչ ա վուր քու կնիկդ իմ... հա՛... (հայելիում ուղղելով կաւիքը։) Ափսոս Նինօ. կար ժամանակ վուր, իս էլ ատաղների հիդ մասլահաթ էի անում. վուր իս էլ լայկովի-փերչատկի ու ցիլինդրաւուրի արժան ախչիկ էի. մազրամ... էհ... (խոր ախ քաշելով): ա՛խ... ա՛խ... ա՛խ...։ Ի՞նչ անի լաւ նարդի խաղացողը, վուր զառը «դուշէշ» չի խփում։ Բախտիս տանը քանդւի, իս ինչ անիմ։



Ստեփան.

(Գլուխը թափ տալով.) Հա՛յի գիդի հա՛. քու մասխարէն էլ վուր դառայ...։ Է՛հ մէ ժամանակ իս էլ էնէնց տղայ էի, վուր սաղ Էւրոպիումը ինձ հիդ մարթ չիր գայ.—վիրջը, էնէնց փոդրաթնիր ունէի, վուր հազար-հազար թումանոցների հիդ բուրթուրանայ էի հաղում...։ Էլ ինչ հարուստ ախչիկ ասիս, վուր ինձ չէին տալիս... ու ինձ համա էլ ուփրօ լաւ կուլէր, վուր խաթի պէս քիզ րաստ չէի էկի։

## ՏԵՍԻԼ 4.

Ստեփան, Նինօ և Գիգօ.

Գիգօ.

Բարի լիս ձիզ։

Նինօ.

Աստծու բարին. համէցէք, նստեցէք։

Ստեփան.

Օ՛հ, Գիգօ, ու՛ր էս ա՛յ մարդ, էլ չիս էրևում։ (Գիգօն նստում է Ստեփանի սեղանի մօտ):

Գիգօ.

Ժամանակ չունիմ Ստեփան ջան, ինչ անիմ։ (Ձեռքերը թափ տալով): Հազար ու մի դաւի-դարարա, խլապոտ, դիփ. մէտի մէբաշ, գլխիս վրայ դառան ու էլ չկարացի չուն՛չ քաշիմ։ Իս էլ վուր քիզ պէս տօխտօր, վարթաւումիզով ըլիմ ախպէր, էլ դարդ ասած բանը սրտումս չիմ ունենայ, համա...

Նինօ.

Տէր-Ամենակալ Աստուծը, թող քու տղիդ էլ դօխտուրութէնի արժանի անէ, Գիգօ ջան։

Գիգօ.

Բերնիդ շաքար Նինօ ջան, համա ա՛խ. եարաբ կու հասնիմ էդ օրին,

Ստեփան.

Ինչի՞ չէ, ա՛յ մարդ. կուլի վուր քու տղէն ուփըօ պրոփի-սոր է դառս գալի. ո՞վ կարա իմանա էս աշխարքի բանիրը:

Նինօ.

(Առանձին տօնով:) Ի՞նչ... պրոփեսորը գոխտուրից ինչով է լաւ ը, քա՛:

Ստեփան.

(Զգացւած): Չէ, ինչի՞ պիտի ըլի համա՛, գէհ... նու վսօ ժէ... Ինչ կուզէ թող ըլի:

Գիգօ.

Բաս էտէնց ըլի. էսօր Վանոյին մնում ինք հա՛:

Ստեփան

Հա՛. տելեգրամումը էտէնց էր գրած: Գիգի՛ս. էս մէ գլ-պէշի համա իրեք սհաթ էր ճրկայրել ա՛յ, էն, էն, բաղբօյ-նիկը:

Նինօ.

(Ուրախ Գիգօյին): Հա՛յ թէ ուրախանումիք հա՛, վուր մուքթա-մուքթա գոխտուր պիտի ունինաք. արա բարեկամ-նիր չի՞նք:

Գիգօ.

(Ձեռքը թափ տալով): Ի՞նչիր իս սսում ա՛յ կնիկ: Աս-տուած վուչ անէ, վուր գոխտուրի ճամփը նըրնգնիմ, իմ դուշմաննն էլ չընգնի դրանց ձիռը:

Նինօ.

(Նկատելով իւր սխալը): Վա՛յ քոռանա իմ ջուխտ աչքիրը հա՛, իս խօ դրա համա չասի, քա՛:

Գիգօ.

(Ստեփանի ուսին խփելով): Էլ ինչ դարդ ունիս Ստե-փան ջան. տղէդ կուգայ, ձիդ հիդ կուտայի, ու ո՞վ է իմանում ինչքու բողազնիրդ օսկու մէջը դաւլիաթ անի:

Նինօ.

Մեռնիմ իս Վանոյիս պեւալած ջանին, հիմի դուք տիսէք թէ դուշմանի աչքը վուրդի է դառս գալի:

Ստեփան.

Օսկի, էրծաթ ու անհաշւ հարստութին իս չիմ ուզի



ախպէր, օղմաց իմ խարջած փուղիրս, ինձ էլի հիդ տայ: Մէ քիչ առաջ հաշւէ արի Գիգօ ջան, ու Քրիստոսի մի անումը գիդե-նայ, վուր էտ մէ տղէն, ծնւելու օրից, ինչքու էս օրւան օրը, երկու հազար թումնից էլ աւել նաղդ փուղ է նստի ինձ:

Գիգօ.

Էհ, ինչ անինք, Ստեփան ջան. խարջիցը վուր փախչէիր, էս օրն էլ խօ չէիր տեսնի: Ինչի՞ մխլինով չպիտի դին անիս քու հիմիկւայ անումդ: Թէ վուր մինչ օրս քիզ մէկ ու էրկուսն էին ճնանչում, հիմի կլի սաղ աշխարքումը պիտի անումդ դառս ընգնի, վուր դուն էլ սովրած վորթու տէրիս ու գլուխդ էլ դդակ ունիս: Հիմի խօսքը սովրել է, հուսում արնիլն է: Իս վունց որ փաւաւուրդիմ անում, հիմիկւայ ժուղը, անուս մարթը մէ ճիճու կերած խնձորին էլ չաժէ: Վուրդեղ վուր հուսում, լուսաւորու-թին ու գիդութին կայ ախպէր, փուղն էլ էնդի է համեցէք անում: Արա մէ գնա ու տիս թէ վունց ին հարստանում մեր հիմիկւայ գոխտուրնիրը. քիչ ա մնում վուր սաղ աշխարքն էլ արինդով վիկալնին: Մէ քանիսն էլ օրէկան հինգ-վեց թում-նին զարուլ չին կենում: Բաս դուն հուսումը, հանաք բանիս գիդո՞ւմ:

Նինօ

(Բազկատարած:) Ո՞վ կամար-կատար Աստօձաձին, էր-նէկ ինձ էլ ջաղդով արժանի անիս էն օրին, վուր իմ պեւալած Վանօս դամաչնի կարետով հիւանդնիրուն վիզիտնիր անի ու մուճա-մուճա փուղիր բերելով տայի: «Հա՛, դէդի ջան, վունց որ դուզիս, էնէնց էլ խարջի»: Ի՞նչիք ասում քա՛, էն չախը վուր մէկս-էրկու չդառնամ ու նուր մէկանց չջահելնամ, բաս էլ ինչ դահրումար պիտի ըլիմ,

Ստեփան.

Ա՛յ կնիկ, ինչ իս ցանցառ-ցանցառ դուս տալի: Գանա էդ վուր կաղնաչէտամօն իս, վուր փողիրը ընդունիս: Ջէր թող իրէն պարտքը տայ, էն վուր նրա խաթրու վըխս իմ կալի. իժում էս անիրը քանդի ու էլի նուր-մէկանց թազա չինի. ախ-չկաս էլ մարթու տայ. ինձ հիդ էլ հաշւէք դրատի, ու իժում դուն գիդիս ու նա: Վա՛, հէր օխնած «էծի տիրոչը. վուր էծը չըն տալիս, բաս պոչն էլ չպիտի տանն»:

Գիգօ.

Հայ թէ լաւ վախտն է գալիս Վանօզ հա. հիմի է դրանց հոնձի վախտը, չունքի էստի էնքամ լիխօրադկա է պտտում վար...

Ստեփան.

Է՛հ, դուն էլ բան ասիր էլի։ Լիխօրադկա ի՞նչ է վար, ничаго, пустякъ։ Ա՛յ ի՞նչ կսսիմ խօլերի վախտը...։ Պա՛հ, պա՛հ, պա՛հ. Թամամ գոխտուրներու զադին է էլի։ Գիգի՞օ, ամէն մէկը երկու-իրեք հարուր թուման փող է ղադում ամիսը։

Նինօ.

(Սարսափած): Չէ, չէ, չէ, գենացվա, իս վանց էդ յաւն իմ ուզում, ու վանց էլ դրա բերած փողերը։ Բա էդ իսօ իմ Վանօս էլ պիտի խօրվելայ ընգնի. վա՜յ, վա՜յ, վա՜յ, թող առաչ, առաչ Նինօյի օրը խաւրի, թող առաչ իմ գերեզմանս փորի, օղորմոց իմ Վանօյիս բան չպատահի։

Ստեփան.

(Գիգօյին)։ Էս էլ քիզ կնդայ խելքը։ (Նինօյին)։ Ա՛յ կնիկ, մաչ էնքամ էլ չիս իմանում, վար գոխտուրներուն վաչ ցաւ է մօդենում ու վաչ էլ խօրվելա՛յ...

Գիգօ.

Ստեփան, ջէր դու ինձ էն ասա, Վանօն ուփրօ ինչի՞ ասպեցիալիստութինը սովրից, հա։

Ստեփան.

Ի՞նչ գիդիմ, Գիգօ ջան, ասում է նուսրինի...

Գիգօ.

(Գլուխը թափ տալով): Է՛հ էդ էլ էնքամ վանչինչ... համա, իմ կարճ խիլքովս էն կասիմ, վար Վանօն թէ վար սովրէր երէխէքանց հիւանդութինը ուփրօ լաւ կուլէր։ Ա՛յ տեսնումինք էլի, վար մինձիրը էնքամ չին հիւանդանում, ինչքամ պուճուրնիրը։ Էդ էլ էնդուր վար, երէխէքը ինչ ասիս ուտումին. էլ չին հարցնում՝ խակ է, թէ հասած. հում է, թէ էփած. քաղցր է, թէ, թթու...

Ստեփան.

Էդ էլի վանչինչ. դու աչքերի հիւանդութինը տեսնա էս-



քամ մինձ քաղքումը գիփ մէտի հինգ դօխտուր չիս գթնի, վար մէ օրինաւոր բան իմանալիս ըլին. վար աչքացաւոտներուն կարինան լազաթի պրծեցնին։ Դրա համա էլ, էն սարաղլին չատ ու չատ ապուչեցի, պաղատեցի. ասի վարթի, թէ ուզումիս վար խեր տեսնի, գնա глазнои специалисти դառ ասի, համա ինձ մարթատիղ էլ չզցից. էհ...

Նինօ.

Նա իրա բանը չատ լաւ է իմանում։ Օչով չի կանա նրան խելք սովրացնի։ Էնացւալօս իմաս գէդա։

Գիգօ.

Էդ ինչ նրա խօսքի ջուղաբն է։ Համա դէհ, գիփ մէկ է բան չկայ. տրա Ստեփան ջա՛ն մաղարիչը քու վրէնա։ Դէ, ժամ ու ժամ արի ու մի լաւ ճաշ տաքքի։ Սիրուն, սիրուն վառիկնիր, լաւ հնդուհաւ, զուճի. հա՛ զարթ կախեթու գինու համա էլ փիքր մի անի. դու ինձ մօդ արի, իս քիզ լաւ Նժանանոյի տիղը կուտանիմ...

Նինօ,

Մայլոփ գենացւա, ջէր մէ գայ ու իմաս իս գիդիմ։ Էնէնց ճաչ տաքքիմ, վար մատնիրդ էլ հիդնիրը ուտելիս ըլիք։ Գիփ մէտի ջոգած ու «մինձ» մարթկանց կաւ մնայիմ, վար իմ Վանօիս դրանց հիդ ծանօթացնիմ։ Բա՛, ով է իմանում չհաւանին ա՛յ, չէ...է... Ով է իմանում ասին թէ՝ «էհ, էս ինչ փեսացաւտղայ է» մա՛չ, մա՛չ...։ Պատկիրքը — սիրուն, պեւալած. խասիաթը վանց որ մամա-Աբրամի զառը, ու էլի հուսում տասն պրծած — դօխտուր։ (Առանձին տօնով)։ Վենացւալէ բիճօ բիճիկօ։

Գիգօ.

Հիմի դուք չալիչ էկէք վար, մէ հազար թումանոց տեչիկ էլ ճարիք Վանօյի համա ու մէ հանդով էլ բալքի ծառայութէնի տեղ գթնիք Բաքումը։ Սրա հարստութինը էնցի է ա՛յ. վար գիդենաս թէ ինչ խարար է էն օխնած տեղումը... պա՛հ, պա՛հ, պա՛հ, սաղ Բաքուն էնա նաւթի մէջը լող ա տալիս էլի։ Փողը ընը՛ (ձեռքով ցույց է տալիս). օխրաթ, թիավ մօդ անելու։ (Մտաբերելով): Վա՛հ Ստեփան ջան, մաչ չիս ասի, ասում են վար Մանթաշովի մաղանը էլի նաւթ է խփի կէս միլիոնի չափ։ Ախպէր

բախտ ունի էլի էդ մարթը, բախտ։ Աստուած վուր տալիս է էրկու ձեռով է տալիս։

Ստեփան.

Էրնէկ նրան։ Ասյ դրուստ էսոր համարին սաէ, «Տուր, ուր աւելու՛ն է»։ Չէ բա Գիգօ, Աստուած վուր խելք ունենայ, տաս մէ տեհնիմ, դմակին էլ ինչո՞ւ անում ճրագու քսիլը, հա՞...։ Ախպէր մեր պէս քասիբին վուր մտիկ անի, ուփրօ լաւ չի՞ ըլի...

Գիգօ.

(Գլուխը թափ տալով)։ Ա՜խ...։ Սրանից մէ տասը տարի առաջ, թէ կուգիդենայի վուր Բաքումը նաւթի մադան պիտի լուս ընգնի—հիմի ուստա ինձնից հարուստ, ինքը Ռոշիլդը չէր։ Էնքամ անդէր փողերս, էս մունդարիկ քաղքումը դաղթառափ արեցի ու սատանի պէս մէջէր մաքումս էլ չանցկացրի թէ մէ էրկու օրավար հող առնիմ Բաքումը, եսոր հողի անդերութին էր... (Մօր ախ քաշելով)։ Ա՜խ, ա՜խ, ափսուս վուր էս անդէր խելքը, էն չախը չունէի. համա... էհ, մուսմանք ուփրօ լաւ կուլի...։ Մախլաս էլի։ Ասածս է «Տուտուցը եսոր խելքը տանում կուտայ—կասի թէ բախտս է մեղաւոր»։

Ստեփան.

Էդ գիփ լաւ, համա... (Ժամացոյցը տեսնելով): Դրուստ 12-ն է, գնալու վախտ է. Արի Գիգօ, Վանօյին «նաւստրէչ» գնանք վազզալը։

Գիգօ.

Տոա լաւ գնանք։ (Ստեփանը եւ Գիգօն, լուռ իրար հետ խօսելով, գնում են դէպի ձախ):

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Բ. ԱՐԱՐՒԱԾ.

Այս արարուածը կատարւում է առաջինից երեք ամիս յետոյ: Նոյն տեսարան:

### ՏԵՍԻԼ 1.

Ստեփան և Նինօ.

(Վարագոյրը բարձրանալիս Նինօն նստած է բազկաթոռի վրայ եւ ալբոմի պատկերներն է դիտում. իսկ Ստեփանը, վերին աստիճանի բարկացած, շրջում է: Երեւում է որ լուրջ վիճաբանութիւն են ունեցել):

Ստեփան.

Էդ էլ քու դխտուրը. էդ էլ քու հուսում սաած վուրթին...։ Ա՜խ, ա՜խ, ա՜խ...

Նինօ.

(Անհամբեր)։ Ի՞նչ էլաւ քիզ, այ մարդ. ինչ ես մէ գլուխ ախ ու վախ անում. քիզ ինչ պատահից։ Բա՛, սիրտս կի մաչեցիր ա...

Ստեփան.

Սրանից էլ աւել ինչ պիտի ըլի. սրանից էլ ըւթար ինչ պիտի պատահի էս քամբախտ գլխիս։ Մէ հաչիւ արա, տես թէ ինչքամ փող նստից ինձ դրա հուսումը. համա ինքը կի պաժարնիներու մէկը դուս էկաւ։ (Մատները կոտրատելով): Գիփ մէտի փուճ, գիփ մէտի քամուն տւից։ Ափսուս, հազար ափսուս իմ փողերս. իմ ամաք-աշխատանքս։

Նինօ.

Ինչի՞, այ մարթ վուրդիանց իս խմանում վուր փուճ...։ Փի՜հ...

Ստեփան.

Վուրդիանց. (դառը ծիծաղ). հա՛, հա՛, հա՛... հէնց իրան

խօսքերից ու արարմունքներից։ Տօ անսքանդ էլ ինչ «վուրգի-անց», քանի վուր աչքներումս էնա անհնում ինք էլի. ա՛յ չուրս ամիս է գնում դրա Մոսկովից գալը, ու չուրս անգամ թամամ փուղ չի տուն բերի։ Բարեկամներից ու ծանոթներից դա փուղ չի վեկալնում. զարիբներուն խօ ինքն է նրանց փուղ տալիս։ Է՜... ու թու մէ երկու. ան իրեք թուման էլ փուղ է ձեռին դյում, էն սհաթին ցիմբիր գնացող սուգնոմներին է բախշում։ Բարեգործական թրխանիր է սարքում ու... էհ, մէ խօսքով անմեքի համա բաց է արէ իրան օղորմած փիչը, ու միզ կի վունց մէ կալէկ։ Բաս էստուց էն է դուս գալի, վուր ուրիշի համա ինք վուրթի մնձայրի. վուր էնդգամ փուղիրը, ուրիշի համա իմ խարջի։ Ով չալիչ է գալիս սաաչ գնալու, օր սաաչ մէ երկու-իրէք չահիի տէր դառնալու, դա կի փիս «նարուխատի» ձիու հանգի, ուփրօ հիդ-հիդ է գնում։ «Էս սրան, էն նրան» ա գիփի ասում։ «Իս ասում է անամօթութին չիմ կանա անի. իս փուղ դիզելու համա, չիմ ուսարտի հուսումս ասում է. իս պիտի գնամ գեղիրը ու զարիկ գեղցիներին մուքթա լուսացնիմ» ասում է։ (Բազուկները տարածելով)։ Տօ, էլ ինչ գի-գիմ, ինչէր չի ասում։ Վա՜հ, վա՜հ, վա՜հ, ձիգ մատաղ ախպրտիք մէ ինձ ասացիք, էսքամ էլ ուսրատութին, էսքամ էլ խելքի պակասութին անհիլիք օրքին տիզ։

Նինօ.

Ջէր էլի երէխայ է Ստեփան ջան. անփորձ ջահիլ է։ Մէ քիչ համբերի, աչ ու ձախ մաքի անի խեխճ երէխէս, սրան-նրան տեհնի ու իմում կուչի վուր էդ «ուսրատութինը» ուրիշի վրա ծախի։ Հէր օխնած. ինչխս մախչօրեկա պանտի պես, խեխճ տղի բողլին չոքէ ու չիս թողնում վուր մէ քիչ շունչ քաշի։

Ստեփան.

(Յուսահատուած)։ Է՛հ, ինձնից դէնը թող մինխատար էլ դառնայ, ինձ ինչ. իս խօ չիմ կանա տեհնի։

Նինօ.

(Ուսերը շարժելով)։ Ա՛յ մարթ, դու խօ խելքումդ չիս էլի. ինչ դայդի իս խօսում. քա՛, վիր կաց, դէս-դէն մէ թամաշայ արա...։ Ի՞նչ իս բայխուշի պես տուն ընկել ու քիթ ու պռունգդ վիր թողէ։ Վա՜... զարմանք է։



Ստեփան.

Ա՛յ կնիկ, Քրիստոսի խաթեր, դու էլա ինձ հանգիստ թող։ Իմ սրտումս էլ դիվլիր մտիկ է... խելքիս կիսը թամամ կորցրել իմ։ Դարդից ու բողմից քիչ ա մնում վուր խեխտուիմ։ Ա՜խ... ա՜խ...։ Իս վունց որ տեհնում իմ, դա մէ սաղ աշխարհ էլ կուտե-նա իրէն համա ճարած։

Նինօ.

Ի՞նչ իս սարսաղ-սարսաղ դուս տալի ա՛յ մարթ. դու խօ էրազումդ չիս։

Ստեփան.

Ի՞նչ էրազ, ինչ, տօ տուն քանդածի վուրթի։ Սա թունդ քացախ է, քացախ, մաչ չիս կանացի էդքամ էլ իմանայ։ Մաչ անգձումդ չի մտնում, քու ագիգ-բագի ընրնից բաց թողած խօսիքը՞։

Նինօ.

Բա, հանաք է անում, Ստեփան ջան, հանաք։ Խօ գիդիս վուր Վանօն աշկերանց կուսալիր չէ։

## ՏԵՍԻԼ 2.

Ստեփան, Նինօ և Վանօ.

(Վանօն մտնում է ղիմացի դռնից, տխուր եւ մտազբաղ, վերին աստիճանի համեստ հագուստով)։

Ստեփան.

Ո՞ւր էիր։

Վանօ.

Հիւանդի մօտ։

Ստեփան.

Իժում, ինչքամ ուխին։

Նինօ.

Վանօ ջան, մեռնիմ արևիդ, ասա էլի ինչքամ ուխին։

Վանօ.

(Սառը)։ Ոչինչ էլ չուխին։

Ստեփան.

Վօնց թէ վունչինչ։ Էրկու կիրակի ա մտնիս գալի, լուսա-

ցնում խա, գլըխ խա անում, ու վունչինչ...։ Բաս վունց որ էրեւում է էշի մշակիս էլի։

Վանօ.

(Նեղացած)։ Հա՛յր... ну! հինգ րուբլի ուրին. յհատ՞յ (Կողմ)։ По неволѣ приходится врать.

Ստեփան և Նինօ.

(Միասին զարմացած)։ Հ ի ն գ  մ ա ն է թ։

Վանօ.

Նրանք այնքան խեղճեր են, որ այդ հինգ րուբլին էլ դեռ չեմ վերցրել։ (Կողմ)։ Ахъ... чертъ возьми, չկարողացայ պահել ինձ։

Ստեփան.

Տօ, գիժ, я вамъ гавару, чито у васъ на галава умъ няту!

Նինօ

Ինչի՞ վուրթի, մա՞չ ինչի՞ համա սովրեցիր։ Ինչի՞ համա գլուխդ էդքամ տրաքացրիր, հա՞։

Ստեփան.

Բաս ինչի՞ համա խարջել ունիր էրկու հազար թումանը։ Բաս ինչի՞ համա «ունիվերսիտետում» մինձացրի հա՞։

Վանօ.

(Կողմ)։ Ա՛... ախ... (Նրան)։ Հա՛յր, ի սէր Աստծո, խընդրում եմ վերջ տաք ձեր այդ պահանջներին։ Բաւական է, որքան մաչեցէք ինձ այդքան կարճ ժամանակամիջոցում։ Դուք պահանջում էք հայր, որ ես նրանցից փող վերցնեմ, որ ես բացարձակօրէն կողոպտեմ նրանց, որովհետև ուսում եմ առել և այդ ուսումը ձեզ նստել է 20,000 րուբլի։ Բայց, համեցէք մի բարէ նրանց տուն, հասկացէք նրանց կենցաղավարութիւնը, նրանց թշուառ կեանքը, և ապա այնպէս պահանջեցէք։ Նրանք փոթորկից հալածուած խղճուկ թռչուններն են հայր, որոնք միայն խնամքի են կարօտում. իսկ դուք պահանջում էք, որ ես նրանցից փող վերցնեմ։ Բայց միթէ ունեն նրանք այդ անիծեալ փողը։

Ստեփան.

Վուրթի, տանը վուր էրէխէն լաց ըլելիս ըլի, տաս մէ տեհնիմ, նրան ինչին է պէտք քու գրսի օղորմաձայնը։ Իս էստի



նեղ ափղն ընգած, հա՛յ-հա՛յիմ անում, վուր մէ օղնող ձեռք գայ ու ինձ քոմագ անէ, դուն կի էնդի բարաքալի վրայ խա մառն գալի։ Ա՛յ անիծուի էթասուր հուսումը, վուր քեզ պէս ջահելնիրուն խելքիցը հանում է...։ Դրա մազմոզի քօքը կտրւի, հա՛, քօքը։

Վանօ.

Ցետոյ հայրիկ, այն խեղճերը ինչո՞վ են մեղաւոր, որ քո դրամադլխից պակասել է 20,000 րուբլի։ Վերջապէս, չէ՞ որ դու հինգ րուբլիով էլ ոչինչ չես դառնայ։ (Կողմ)։ Эхъ, впрочемъ, съ ними и не стоитъ говорить.

Ստեփան.

(Կնոջը)։ Ա՛յ կնիկ, էսթասուր գարգիմանց վուրթին ամը նմանից։ (Վանոյին)։ Ա՛յ վուրթի, մա՞չ չես գիդի վուր հինգ-հինգ մանէթներիցն է փողը մօդ ըլում։ Միլլիոնին վուր մէ կապէկ պակաս ըլի, նրան միլլիոն չին ասի, չէ...

Նինօ.

(Ձեռքիլան ցոյց տալով)։ Ասա վուրթի, մէ իմ չեքիլին ու հարչէին թամաշա արա։ էն հինգ մանէթը վուր վեկալնէիր ու ինձ տայիր, էն սհաթին կուվաղէի Զիլինգարովի դուքանը ու ձևած մէ լաւ նասատյի հարչիս կու արնէի...

Վանօ.

Ուրեմն պահանջում էք, որ ես նրանց կողոպտեմ, որպէսզի դուք լրացնէք ձեր տանից այդ էլ ճոխ վայելչութիւնները...։ Դուք ուզում էք, որ դրանց նմանները ճնչւեն թէ՛ չքաւորութիւնից, թէ՛ հիւանդութիւնից և թէ ինձ նմաններից...։ Ո՛չ հայր...

Ստեփան.

Բաս լա՛ւ հօրէսի գէնը ինչ հիւանդ վուր ասաս գայ էտէնց ժամ արի, ու տեհնինք թէ օջախդ իփ կու չնացնիս։ Աշխարքիս էրեսին էնզգամ սոված ու ծարաւնիր կան, վուր հազար քեզ պէս սարսաղնիրը մօդ ըլին—չին կանայ նրանց փորնիրը կշտացնի։ Չէ՛ վուրթի, դուն չիս կարա գեղցուն հարստացնի, չէ։ Էդ մաքիրը գլխեմէդ հանի, թէ չէ... Աստծու մի անումը միայ, վուր դրանով դու մարդ չիս դառնայ։

Վանօ.

Հայրիկ, շատ ուղիղ ես ասում, որ ինձ նման քնձռոտները նրանց կերակրել չեն կարող։ Բայց մի մոռանայ, որ այդ քաղցած ժողովուրդի արդար պահանջի ձայնը, կկերակրի նրանց թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Ստեփան.

(Վերին աստիճանի բորբոքուած)։ Արդար ձէնս վո՞րն է. ի՞նչիր էս տուտուց-տուտուց դուս տալի, ա՛...

Նինօ.

Լա՛ւ, Ստեփան, ինչ էլաւ քեզ քա՛... «Էրթի ալէլուիա, ղվթելսաց չասցղէրաօ»։ Էս մէկը բախշի, էլ չի անի։ Դուն ջէր փրակ ու զնաչոկ էլ առ, վուր հարուստներուն կարէնա վիզիտնիր անի։

Վանօ.

Ես դրանց կարիքը չեմ զգում։

Ստեփան.

Ի՞նչի՛ ա՛...

Վանօ.

Որովհետև այսպէս էլ ազատ կարողանում եմ այցելել իմ հիւանդներին։ Իսկ նրանց միմիայն օգնութիւն է հարկաւոր։

Ստեփան.

(Նինոյին)։ Քեզ չասի, վուր դրա գլուխը դարձած է ածած։ Ա՛խ խէլք, խէլք... ի՞նչ թանգագին ապրանքիս դու։

Նինօ.

Քա՛, չէ՞ վուր մինձ մարդկանց մօդ է փուղիրը մօդ ըլում։ Դուն պիտի չալիչ դաս, վուր դրանց ափրօ չատ վիզիտնիր անիս։

Վանօ.

(Սաոր)։ Ես չեմ կարող խիղճին հոգևարքի մէջ թողնել և դրանց մօտ վիզիտ վազել։

Ստեփան.

Վա՛յ մէ, վա՛յ մէ, էս խիղճը, վունց գլուխն է իմանում ու վունց էլ վատը։ Վուրթի, էթուր մինձերուն վուր վիզիտնիր չանիս, մաչ վո՞ւնց պիտի կարինաս լաւ «հաքիմը» ձարիս ա՛չ



խրքումը խառնուիս հա՛։ Թէ վուր արան նրան չմօղենաս, չքըռմըվլիս, էլ ո՞վ քեզ զոնաղ կանէ հիւանդներու մօդ, ո՞վ ա՛ խիղճ օղորմելի։ Աչքիրդ լա՛ւ բաց արա ու քու ատղերքին էլա մտիկ տու է. տեսնում իս նրանք վունց ին ժաժ գալի, դուն էլ էնէնց ժաժ արի էլէ։ Աշխարքը, վուրթի մէ հայլիա է...։ Աս քեզ հիդ չպրծաւ Կոտէ Ջանդիևը, ինչի՞ նա խելօք մարթ դաաւ...։ Ախ տեհնում իս թէ վունց է օսկիներու հիդ կօճօրանա հաղ անում։ Но ка, пасматрить, какой онъ денги заработитъ. Դուն ի՞նչ նրա լաէղ մարթիս։ Նա վուր կայ, խալաս օսկի է ախղն ու ախղը։ Էնէնց հունար ունի, վուր ափալի քարհմէն իղ կու հանի, համա դուն, մէ ծակած գրոշ էլ չունիս ջէբումդ։ Դուն էնթաուր բանիր իս անում, վուր ամէնարեզավլաթնիրուն էլ վախ չէ։ Ինչի՛ վուրթի, ինչիս սատանի ձիու վրայ նստի...

Վանօ.

Նա այնպիսի ստոր և պաղլեց աղայ է, որ ես չեմ ցանկանում նոյն իսկ բարև էլ տալ։ (Ժողովուրդին)։ Тоже, сравнилъ съ какимъ то негодяемъ!

Ստեփան.

Քեզ պէս իօ բունտերում ու ղալմաղալներում չի խառնուում։ Ի՞նչա՞վուր քու խելքովը չի ժաժ գալի, հա՛։ Ինչ վուր նա վուտնիրումը խելք ունէ, նրա կէսը էրնէկ քու գլխումդ ըլի։ Թէ չէ, ինչ Ջանդիև, ինչ ուրիշնիր։ Արա մէ ջախա քաշի ու մէկէլ դոխտուրնիրուն թամաշա արա, տես թէ նրանք ի՞նչիր ին անում. տես թէ վունց ին մուշտարիքը չաղացնում է...։ Լաւ խաղաթին ձգում ին փայխտնումը. ըջին էլ կողքի վրայ նստեցնում, ու քչած, քուչի խան էս կրնեն, խան էն կրնեն, գեխր ու գլխիր ին թռչում. միթամ ինչ է—տեսէք ա՛յ ժողովուրթ թէ ինչքամ պրաքտիկայ ունիմ։ Թէ վուր մէ տեղ էլ մնձրածին ըլում, ան թու չէ իրենք ին մնձրանք սարքում, —ըջին տասչուց խրատած ունին, թէ՝ էս ինչ, էն ինչ վուխը տասում է, ինձ դուս կանչի ասիլով «Гасiадинъ до‹торъ, ѓалнои при шолъ тэбэ хочитъ». Տեհնում իս ի՞նչ հունար է, ի՞նչ խելք է։ Դոխտուրը պիտի լոմկի ըլի, լոմկի. չէ թէ քեզ պէս—լօրի։

Վանօ.

(Դառը ծիծաղով)։ Հա՛, հա՛, հա՛, ներողութիւն հայր, ես ոչ կարող եմ այդպիսի «հունար» բանեցնել և ոչ էլ թէ՝— խելք։ Այդ տեսակ առողութիւնները, ինձանից հեռու են փախչում և այն էլ շատ հեռու։

Ստեփան.

(Բարկացած)։ Դուն չես կանա, էնդուր վոր գըզըռումդ մէ աւմայի խելք էլ չունիս։ Չես կանա, էնդուր վոր ви дуракъ, ви сумашечи... ви...

Վանօ.

(Ձեռքերը կրծքին ծալած, նայում է խղճալի նայուածքով)։

Նինօ.

Լա՛ւ քա, չէնց ըսա դավէմարթա։ Սովրած ալին, պիտի էսէնց ըխարստ անիս... վա՜...

Ստեփան.

(Ձեռները տարածած)։ Այ անիծւի ինքն էլ, ու իրան հաստատին էլ։ Ունտիվերսիտետը դրան ափրօ գժւեցրել է, չէ թէ խելօքացրի։

Վանօ.

(Ուզում է հանգստացնել)։ Մի բարկանայ հայր, մի բարկանայ։

Ստեփան.

(Հրելով)։ Կորի գէնը, տօ սովխալխատ տօ, տօ, պաժարնի։ Եփոր դուն էգնասուր Աստծուն չես հաւատում, արա քու հօրն ու մօրդ վօր ջհանդամից պիտի հաւատաս (Փողովուրդին)։ Իրան օրումը, խաչիրուն չի համբուրի։ Գդակը վօր էկեղեցումը տուն դցիս, չի գնա ու չի դուս բերի։ Էս միջ տարի կուլի ինչ սուփ ճաշակը չէ ընթունի...։ Մախլաս էլի, մէ խօսքով, չիմ կանացէ իմանայ լէգդի է, թա չէյթան-թուրք։

Նինօ

(Կողմ)։ Սկսից ու էլ չի դաթար տայ։ (Նրան) Այ մարթ...



ՏԵՍԻԼ 3.

Նոյնք և շինակոն.

Շինակոն.

(Մտնում է ցնցոտիներ հագած. ուսին գցած է մի հին խուրջին)։ Բարի աջողում ձեզ։ (Վանօյին առանձին գլուխ տալով)։ Աստուած երգար կեանք տայ դոխտուրին։ (Խուրջինից հանում է կարաքի քիլան ու մի կողմ դնում)։

Վանօ.

(Ուրախ-ուրախ ձեռք առնելով)։ Ա՜... ա՜... բարև, բարև, նստեցէք խնդրեմ։ Ի՞նչպէս էք, լաւ էք զգում ձեզ։

Շինակոն.

Շատ շնորհակալ եմ, դոխտուր ջան, փառք Երդնաւորին. էնա վոր լաւ եմ։

Նինօ.

(Փողովուրդին)։ Շա՛տ, չա՛ խաթար է, էնացվալօս իմաս դէդա։

Ստեփան.

(Փողովուրդին)։ Արի ու հիմի սրանից խելք ուզի։ Մինձ մարթկանցից էնէնց է փախչում, վունց որ ջհուդը խոզի մսից. խիղճերու համա կի, հօքին էլ չի խնայում։

Շինակոն.

(Լուռ Խօսելուց յետոյ)։ Ձեր հրամանով գնալուց եդոյ, մի թարուն սարաժնիկ վրայ դառաւ։ Ձեզ...

Վանօ,

(Ընդմիջելով)։ Ը՜... ը՜... ուրեմն ասում ես, որ ցաւը բոլորովին անցել է։

Շինակոն.

Հիմի ինձ էլ բան հարկաւոր չէ։ Տէր Աստուած որ դուք էրգար, շատ երգար ապրէք, մեզ պէս անդէր ու անճար էլածին բօմաք անելու համար։

Նինօ.

(Զզացւած)։ Մա՛չ քա, էսէնց օխնած ձեռ ունի իմ վարթիս։ Վանօյիս աւած դիղերովը, դիփանքը արծնում ին իրենց

ցաւ ու կրակիցը։ Ինչու՞ էս օր, ջէր մէ մարթ էլ չի մնաց, էնացվալօս խմա դէդա, հա։

Շինական.

Վանօ ջան, Սարքիսը ինձ ղրկեց, որ էս նամակը ձեզի տամ։ (Ծոցից հանում, տալիս է մի նամակ)։

Ստեփան.

(Փողովուրդին լացակում)։ Ա՛խ, ինչ անիմ ախպէրտիք. ձիր հոգուն մատաղ, դրուստ լաւ գախաուրէ, լաւ էլ փուղ նատից ինձ; համա ինչ գուս էկաւ էստուց, քանի վուր իմ Թափած ամագ-աշխատանքս ամմունք չի ըլում։ Լաւն է, զուրթ է. համա էս մունդրիկ աչիբքումը ով է լաւին գին տալիս։ Մէկ էլ էն վուր, էս ղարիբ-ղատալներից ինքը ինչ պիտի դանիայ։

Վանօ.

Հայր, քեզ ինչ պատահեց...։ Վերջացէս...։ Что за безобразіе!

Շինական.

Ա՛ղա ջան, ախր էդ ինչ էք հրամայում...։ Ղուրթա մենք քեասիբ մարդ ենք, դրդւած Աստծու բարիքներիցը, համա խմացած կացէք, որ ունեցած չունեցածս կծախծխիմ ու մեր ազիզ բարեկամի պարաքի տակիցը դուս կգամ։ Դուք հէնց գիտում էք, որ ինչա մենք խեղճ, անգէր ու անճար ենք, որ փող ու օսկիք չունենք. Աստուծ էլ չունենք...։ Չէ՛ աղա ջան, մենք է մարդ ենք, մենք էլ ենք քիչ ու միչ բան խմանում, աշխարքիս լաւն ու վատը ջոգում։ Մենք էլ ենք գիտում որ, լաւին պտի լաւութէնով պատիւ տանք ու չարին էլ, իրեն—չարութէնով։

Ստեփան.

Գիդիս ինչ ախպէր ջան. էս իմ ադէն, վուր էսէնց լաւ գախաուրէ, էրդնաւուր Աստծուն խօսք է տւի, վուր փուղին ձեռ չտամ. էնդուր վուր մաանիրը պիտի ուչքի, ու թէ Աստուծ վուչ անէ, ջէրումը մէ էրկու, իրեք մանէթ փուղ ածի, էն չախը, քու գուչմանը սաղ կուռը պիտի դամբլա ընդնի։ (Վանոն, որ մինչեւ հիմա կարդում էր նամակը, տխուր նստում է բազկաթոռի վրայ, եւ գլուխը ձեռքերի մէջ առնում)։ Ա՛յ ախպէր, թէ վուր փուղերդ զմիչումես, լաւ կանես վուր բերես



ու ինձ տաս, չէ թէ էս սարսաղին։ Հա՛, էսէնց...։ Ղուրթ էդ քիլոլը ինչ էս բերի, դէս տու մէ տեհնիմ։

Շինական.

Գամչի կարաքա, ձեզ մատաղ. մենձապէս ներողութին եմ խնդրում, իմ էս չնչին վարդատրութէնիս համար։ Դրուստա դուք չատին էք արժան, համա դէ ինչ անեմ, Աստծու ուածիցը էսա որ կայ. սրանից աւել բան չկարացի բերեմ ու թէ Քրիստոսի սուրբ Ջատկին արժանի ըլանք, էն ժամը խօստանում եմ, որ մի ջուխտ լաւ գառանիք բերեմ ձեզ համար։

Վանօ.

Լսիր ինձ. երեխայութիւններդ թող։ Քեզանից ոչ կարագ ուզող է եղել և ոչ էլ թէ գառան ուզողը կայ։ Քեզ ինչ որ կասեմ, դու այն էլ կանես։ Այս կարագը կտանես բազար և կծախես. ստացած փողերովդ երեխաների համար հաց կառնես։ Իսկ...

Ստեփան.

Ա՛յ տղայ, ինչ քու բան է. մա՛...։ Какой ваши дэла? Դու գնա գրիրդ կարթա։ (Շինականին)։ Հանաք է անում ախպէր ջան, չունքի ջէր էլի էրէխայ է։ Դուն անգած մի՛ գնի։ (Տեանելով իւղի համը)։ Ը՛հ, ը՛հ... չատ լաւն է. համա սա ինչ է հերիք։ Դուն ջէր պիտի հաւիր ու ինդաուրնիր էլ բերիս։ Հա՛, մաչ, էն ժամը ափրօ լա՛ւ, լա՛ւ դիդիր գրիլ կու տամ քեզ համար։

Նինօ.

Մա՛չ, մա՛չ քա՛, թազա-թազա ձուիր էլ չմոռանաս։

Վանօ.

(Բարկացած)։ Фу! Что за народъ! Съ ними-то дѣйствительно съума сайдешь. (Շինականին)։ Եթէ չես ուզում վիրաւորել ինձ, արա այն, ինչ որ քեզ ասում եմ։

Ստեփան.

(Փողովուրդին յուսահատւած)։ Ի՞նչ անիմ, հա՛... մարթ չիք, քօմագ արէք էլի. դուք էլա մէ բան ասիք։ (Վանոյին)։ Ա՛յ տղայ, ա՛յ վուրթի, ինչիս ուզում ինձմէն. ինչի՞ իս ն՛հախ տիրը արինս պղտորում... Վօտ էլի բօզու...

Շինական.

Դոխտուր ջան, հօրէսի ղէնը ես քո ծառան եմ. ինչ որ ուզենաս էն էլ հրամայի. ես հազիր եմ իմ հոգիս էլ քեզ համա չխնայիմ. թաք դու ինձանից նեղանաս ոչ։ Հիմի ես էլ կխնդրեմ, որ մեզ անաղ չանես, ու էս եղը ընթունես. քեզ մատաղ դոխտուր ջան, աչքիդ տակին ղուրբան ըլիմ ես։

Վանօ.

Լաւ։ (Դրամ է տալիս)։ Առ այս փողը։

Շինական.

Չէ, չէ, ցաւդ տանեմ դոխ... (Վանօն ույժով դնում է նրա գրպանը)։

Ստեփան.

(Կատաղած)։ Տար թումանդը տու, տօ, տար թումանոց...։ Այ կտրուի էն մաչէն, ով որ քեզ գիտըմ ա, իդ, հա...։ Տօ բէդովլաթ, էդ մէ քիլա կարաքը պիտի մըլլքին նստի քեզ։ Ա՜... ա... ախ Աստուծ, Աստուծ, եարար էմէնց էլ սարսաղ մարթ կուլի աշխարքումը... (Շինականին)։ Արի, արի գնա ախպէր. արի թէ չէ... դուն էստի արուն կութափիս։

Շինական.

(Վանօյին խոր գլուխ տալով)։ Մնաք բարով դոխտուր...

Ստեփան.

(Չթողնելով, որ շինականը խօսքը վերջացնի)։ Գնա, գնա ախպէր, թու չէ... (Վզակոթին տալով դուրս է անում։ Մի փոքր յետոյ մնում է եւ խուրջինը դուրս տանում)։

## ՏԵՍԻԼ 4.

Վանօ և Նինօ.

Վանօ.

(Զարմացած այս եղելութիւնից)։ Մայր, այս ինչ խաւարամտութիւն է. ինչեր է անում հայրիկը։ Միթէ սա ամօթ չէ...։

Նինօ.

Վանօ ջան, հօրդ ջգրու մէ իրեք հազար թումանոց ախչիկ ու...



Վանօ.

(Համբերութիւնից ելած)։ Հանգիստ թողէք ինձ վերջապէս։

Նինօ.

(Լացակում)։ Վուրթի մաշ էլ ինչի համա քեզ հուսումի ուինք, բաս էլ ում համա մինձացրինք... հա՞։ Գիդես ինչքամ ամագ ունիմ քեզ վրայ։ Աստծէ, վուրթին վուր ձեռքի գուլուխը ձուաձեղ էփի, էլի չի կանա ծնողների ամագը վճարի։ Տօ ան Աստուած, բաս չպիտի խղճաս մեզ, չպիտի քամաղ անիս քու վիզէերը ծռած հօրն ու մօրը՞...։ (Հալազին ընկնում է բազկաթոռի վրայ)։ Սեւ ըլէր էն օրը, իփ վուր քեզ ծնեցի...

Վանօ.

(Լուրջ)։ Մայր, այժմ ես գիտակցութեամբ եմ անում ամէն ինչ։ Չէ որ մեզ վրայ պարտականութիւն կայ օգնել և սիրել թշուառին։ Չէ որ Քրիստոսը խաչուեց հէնց նրա համար, որ նա սովորեցնում էր մեզ սիրել մեր ընկերոջը։ Բայց ով է մեր ընկերը, հարուստը, փարթամութեան մէջ խեղդուած բուրժուան, որ մի ծանր բեռ է դարձել խեղճ ժողովրդի վզին։ Ո՛չ։ Մեր ընկերն է նա, ով օգնութեան կարիք ունի. նա, ով հեծում է թշուառութեան ծանր շղթաների տակը և հոգին աւանդում դեռ աշխարհ չտեսած։ Ահա, նայենք մեր չուրջը և տեսնենք թէ ինչ է պակաս մեզ։ Ոչինչ։ Իսկ նրանք, որոնք զրկուած են ամէն բարիքից, որոնք մերկ ծնուել են և մերկ էլ ապրում, նրանց չպէտք է օգնել։ Մեր կարեկցութեան արտասուքները չպէտք է խառնենք նրանց աղի արտասուքների հետ, որ ադամանդի փոխարէն զարդարում են նրանց տանջուած կուրծքերը։ Դուք ցաւում, մղկտում էք, որ ձեր միլլիոնաւոր դրամագլխից պակասել է 20,000 րուբլի. իսկ չէք ուզում ականջներովդ անգամ անցկացնել այն աղիողորմ աղերսանքները, որ ամէն մի քայլափոխում հասնում են մեր ականջներին՝ «Հա՛յ, հա՛յ տուէք մեզ բարի մարդիկ, խղճացէք մեզ վրայ... քանի որ մենք էլ ապրել ենք ուզում...—

Նինօ.

(Ապշած)։ Վանօ ջան, խա... խա... կեհամ... Նատօյին... Թուղթ... (Ցետ, յետ նայելով, վազում է դէպի Ստեփանի ննջարանը)։

## ՏԵՍԻԼ 5.

Վանօ.

(Մնում է սառած. պաուզա)։ Թշւառ արարած։ Ափսոս ես դու, բայց առանց կեանքի։ (Մտազբաղ շրջում է. յետոյ նստում)։

Գաբօ.

(Դրսից)։ Ընկեր Վանօ, տանն ես։

Վանօ.

(Տխուր)։ Այո, ներս արի։

## ՏԵՍԻԼ 6.

Վանօ և Գաբօ.

Գաբօ.

Բարև Սիրելիս։

Վանօ.

Բարև։

Գաբօ.

Վանօ, ինչ է պատահել։ Չլինի թէ հայրդ կրկին շարունակում է իրեն աւետարանը։ Ахъ ви дуракъ! Ахъ ви сацвіалистъ, разбойникъ! Հա՛, հա՛, հա՛...

Վանօ.

Դու չես կարող երևակայել, թէ որքան վատ են ազդում ինձ վրայ, դրանց այդ գլխի վարմունքները։

Գաբօ.

Ոչինչ, ուրիշ կերպ էլ լինել չէ կարող։ Դու ինձ այն ասա, գիւղում ինչպէս է գործը։

Վանօ.

Գնացի, մասսովկաներ ունեցայ։ Իսկ վերջը...։ Ա՛ռ, կարդա... (Տալիս է նամակը)։

Գաբօ.

(Կարդալով նամակը)։

Սիրելի ընկեր!

Քո հեռանալուց յետոյ, գիւղացիները ահագին խմբով, մօտ 10,000 հոգի, կարմիր դրօշակները պարզած, ցոյց արին և դիմեցին դէպի ստարշինայի բնակարանը։ Նրան բռնեցին, կապեցին ձեռն ու ոտը, ու տարան բերդը փակեցին։ Կոտրատեցին բոլոր կայսերական նկարները, օրէնքի կանոնները բացեցին, պատուհանները և պետական կարևոր դոկումենտները պատառոտեցին։ Երեկոյեան դէմ, երբ արդէն ամեն ինչ վերջացած էր, գիւղին վրայ եկան կազակները։ Սկսեցին անխղճաբար թակել պատահողին։ Գիւղացիներից պահանջեցին որ նրանք իրենց յանձնեն բոլոր ագիտատորներին, թէ չէ հակառակ դէպքում սպառնացին ռմբակոծել ամբողջ գիւղը։ Գիւղացիները դէմ եղան։ Նրանք սկսեցին կրակել գիւղի վրայ, որոնց պարբերաբար պատասխանում էր մեր դրուժինան։ Ամեն տեղից հրացանների ձայնը մարդու ականջն էր խլացնում։ Սարսափ է տիրել ամբողջ գիւղին։ Փողոցում երևացին ուղղակի կրակում, սպանում են։ Դրութիւնը վերին աստիճանի կրիտիկական է։ Սպանւածների թիւը յայտնի չէ դեռ։ Այրւեցին 14 խրճիթ։ Կան և դեռ այրւողները։ Մեր ընկերներից սպանեցին, Կօստեային, Պետեային։ Փնտրում են և քեզ. գլուխդ ազատիր, գնա։

Սարգիս։

(Պաուզա)։ Վա՛տ է. շա՛տ վատ. Վանօ, պատրաստւիր ուրեմն ասցնելու Բանտարկեալների հիւրանոցը։

Վանօ.

Գաբօ, ես վճռել եմ գնալ գիւղը... Նրանք ինձ սպասելիս կլինեն։ Ը՜... ը՜... Ներողութիւն սիրելիս, ես գնում եմ շորերս փոխելու, դու մի փոքր սպասիր այստեղ։

Գաբօ.

Ես էլ եմ գալիս։ Քեզ հետ առանձին գործ ունեմ։

Վանօ.

Գնանք։ (Գնում են դէպի աջ։

## ՏԵՍԻԼ 7.

Ստեփան.

(Յուսահատւած մտնում է դիմացի դռնից և վրդովւած ման է գալիս)։ Ա՛խ, ինչքան դժար է էլի, իմ վաղ մարթու վարքին ընդավլած է դուս գալի։ Չեմ կանացել իմանոյ թա, ինչ Աստուծ է խառնում էս հիմիկւայ տղերքին։ Հաւատում, կրթութին ստացել են, ու էլի չին կարում գործ անի...։

Տօ, ես ունենում էի հուսումը ու չկարենում սաղ աշխարքը չու
ու մուռ տամ. վա՛, բաս էլ ինչ մարթ իմ, էլ ինչի համա ի
գլուխը ծածկում։ Աստուծ գիտենայ էլի ուստա սաղ սուրգափինի
օսկիքով զանգլիս անիմ... համա... սատծը ասում է. «Փրան
ով ունի, իշատեհ—ով»։ Ա՜խ, թէ իմ օղորմածիկ մամէս էլ ինձ
հուսումի կուտար... էն ժամը դուք թամաշա կօնէիք, վունց էս
սարսաղ խ'ղքիս, ափրօ էլի խելք կու ավելցնէի...։ Հիմիկուան
ջահելները կի, հուսում առնելուց յէնը, ունեցած խելքն էլ են
կորցնում։ Տօ լէքը գնում են, ու դարդակ գալի։ Զէն կարում
սիրը սիրուհիներին ջողի, իրանց խելքն ու չափը իմանալ։ Է՛հ, արա
ես ինչ անիմ. իսօմ չիմ կանա իմ խելքս նրանց տամ։ Վունց որ
քամբախտ սաղի վրա են ծնւի, էնէնց էլ սաղ կինքումը—քամ-
բախտ պէտի ապրին։ Ափսուս իմ խարջած փողերս (Դռան
մէջ երեւում է Գաբօն)։

## ՏԵՍԻԼ 8.

### Ստեփան և Գաբօ.

Գաբօ.

(Դէպի սենեակը, Վանօյին)։ Լա՛ւ, լա՛ւ, ես ամէն ինչ կանեմ, դու գնա։ (Ստեփանին)։ Ստեփան Իվանիչ, ինչու էք խորը մտածում։ Զլինի՞ նորից սխալ էք... ը՜... ը՜...։ Կրկին էրկու հազար թումանի նաղդ փող է նստի Վանօյիս ուսումը՞։

Ստեփան.

Маи синъ Вано, дуракъ!

Գաբօ.

Դեռ ինչ ժամանակ մայիս է, Ստեփան Իվանիչ, ապրիլն էլ չատ է հեռու։

Ստեփան.

(Զայրացած)։ Մայիսումն թէ՛ն, յունվարին ինչ էք իմանում հիմիկուայ ջահելներդ։

Գաբօ.

Ինչպէս թէ ոչինչ չենք իմանում։ Զէ՛, չէ՛ յունական ու լատինական գրամմատիկայից գլուխներս խառնա դուդմա է դարձել։

Ստեփան.

Բանէլ էսէ՛ է, վուր յունարէնով ու լաթիներէ-



նով էլ վունչինչ չդառաք։ Ա՛յ մինչև ու էս պատի վրա կորէկ չաղ տու. մեռ անեմ, մէ հաս էլա կուծիո վրէն,—չէ։ Էնէնց էլ դուք։

Գաբօ.

Ուրեմն դուք մեզ չէք հաւանում։

Ստեփան.

Ձեզ դիփունցդ պէտի մէ թոկով խիխտին. տօ՛ սօցվիւլիստներ, տօ՛ Տոլստովիչի զմուածներ։

Գաբօ.

(Դուշտ ծիծաղ)։ Հա՛, հա՛, հա՛, ումը Ստեփան Իվանիչ։

Ստեփան.

Դրուստ էն Տոլստովիչները։ Նա վուր պատուաւոր մարթ ըլէր, Քրիստոսի սուփ էգէղեցուցը խօ չէին դուս անի։ Դիփունքը ասում էին, ումնի, չա՛տ ումնի մարթ է. համա՛ վերջը կի բանից դուս էկաւ, վուր աշխար քանդող է էլի։ Ասում էն վուր միթամ դուխուրունների գժուացնողը, էգ ձիր ումնի մարթէ էլի։ Ո՞վ գիդա չուրս քան տարեկան մարթ ըլի, մէ վուտը գերէզմաննումը, համա դուարխատ ադին կնիգա պիսալ չտօ, չտօ բօգ նիտառու, դրուստա մի չիտալ էտա կնիգա։

Գաբօ.

Нѣтъ!

Ստեփան.

Լաւ էլ, դո՛ւ ես արէ։

Գաբօ.

Ստեփան Իվանիչ թողնենք դրա մասին խօսելը։ Լսեցէք ինձ, ես մի բան կասեմ։ (Կողմ)։ Ինչպէս սկսեմ չգիտեմ։ (Նրան)։ Ը՜...ը՜... Ստեփան Իվանիչ պէտք է ասեմ, որ Վանօն Մոսկուայում հաւանել է մի օրիորդի և...

Ստեփան.

(Տեղից վեր թռչելով)։ Ի...ն...ն...ն...ն...չ..., հանիլ ֆ ափշէկ։

Գաբօ.

Այո, մի սիրուն, պնտլած օրիորդ, որը...

Ստեփան.

Վա՛յ մէ, վա՛յ մէ։ Իժում ինչ հաւտի է...

Գաբօ.

Նա... հրէշն է։ Վերին աստիճանի զարգացած, ուսում առած...

Ստեփան.

(Ցուցմունքից ձայնը կտրուած)։ Ա՛յ տղայ, հանաք ես անում թէ գլուխս ես տանում։

Գաբօ.

Ես խաղելու տրամադրութիւն չունեմ։

Ստեփան.

Տօ՛, էդ խօ մամա-պապի հաւատիցը պիտի ձեռը վիկալնի։

Գաբօ.

Ցաւալի, ինչ է որ։ Մի՞թէ դու քո հաւատի համար ես ապրում։ Չէ՞ որ դու կարող էիր և հրէա ծնուել։ Բայց դա չէ նշանակում թէ դու ՄԱՐԴ չէիր լինի։

Ստեփան.

Տօ՛, ինչ ա վոր մարթ է, պիտի ջհուդի ախչիկ ուզի։

Գաբօ.

Քանի որ նա մարդ է, և կեանքի ընկեր, ինչու չէ։

Ստեփան.

Ի՜. ի...ինչ... տօ՛... վա՜, սա գիժ է էլի, տօ՛... գէ՛նը, դուս ախպէր... (Միեւնոյն ժամանակ վախեցած տուն են վազում՝ Կէկէլ—դիմացի դռնից, Նինօ—Ստեփանի ննջարանից, և Սօնա—Վանոյի սենեակից։

ՏԵՍԻԼ 9.

Ստեփան, Գաբօ, Կէկէլ, Նինօ և Սօնա.

Կէկէլ և Սօնա.

Գաբօ ջան, Վանոյին բռնեցին։

Նինօ.

Ստեփան ջան, Վանոյին տարան։

} Միասին։

(Լաց, սուգ ու շիւան)։

Ստեփան.

Վա՜յ իմ ամօթս... (Կաթուածահար է ստանում)։

Գաբօ.

Ահա մեր օրը։ Պատկեր։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А Публичная Библиотека Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ имени А. Мясникяна

...ССКАГО СОБРАН... БИБЛИОТЕКА

«ԴԼՊԻ ԼՈՅՍ»-ի հրատարակութեամբ շուտով լոյս կտեսնեն հետեւեալ բրօշիւրները՝

№ 2. Բատրակ. Ընկեր, մի՛ դաւաճանիր։

№ 3. Փ. Լաֆարգ. Ծախուած ախորժակը։




Գրավաճառներին 25% զեղջ։

Դիմել հետեւեալ հասցէով՝
Нахичевань н/Д. 1-ая Вознесенская № 57.

**Н. Осипову.**

ՀՀ Ազգային գրադարան
NL0376587

74.449